# ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տիրոջ ողորմությամբ, Ազգիս Վեհափառ Հայրապետը, վերադառնալով արտասահման կատարած հովվապետական ճանապարհորդությունից, Իր շքախմբով Մայր Աթոռ ժամանեց նոյեմբերի 3-ի առավոտյան: Նորին Սրբությունը չորս ամսվա ընթացքում այցելեց ԱՄՆ-ի, Կանադայի, Արգենտինայի, Բրազիլիայի, Ուրուգվայի և Ֆրանսիայի հայ եկեղեցական համայնքները, ինչպես նաև Կյուլպենկյան հաստատությունն ի Լիսաբոն:

Երևանի օդանավակայանում Նորին Ս. Օծությանը դիմավորեցին պաշտոնական անձինք, Գերագույն Հոգևոր Խորհուրդը, Էջմիածնի միաբանությունն ու պաշտոնեությունը, արտասահմանից ժամանած ուխտավորներ և հավատացյալների խուռներամ բազմություն:

Ս. Էջմիածնում Հայրապետը «Հրաշափառ»-ով առաջնորդվեց Մայր Տաճար, ուր Իջման Սեղանի առաջ կատարվեց գոհաբանական մաղթանք: Ծաղկյա դահլիճում բարի գալուստի խոսք ասացին ու Վեհափառին ողջունեցին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալը, Մայր Աթոռի միաբանության և Գերագույն Հոգևոր Խորհրդի ներկայացուցիչները:

Աջահամբույրից հետո Վեհարանում տեղի ունեցավ ընդունելություն:

**ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ**

4 նոյեմբերի 1960 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ